ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ԳԲԿ-ԳՀԱՇՁԲ-24/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի գնահատման նիստի

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ 16.07.2024թ. ժամը 11:00

Ք. Գյումրի Գ. Նժդեհի 3/3

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ Ժորա Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հովհաննես Ղուկասյան

Կարեն Ասատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ժանետա Մերոյան

Ժամը 11:00 գնահատող հանձնաժողովի նախագահը նիստն համարեց բացված:

Ի պատասխան Գյումրու բժշկական կենտրոն 14/06/2024 ՓԲԸ-ի N 0740 գրության ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից տրամադրված դիրքորոշման համաձայն. Գնումներին մասնակցելու իրավունքի վերաբերյալ պայմանները նախատեսված են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, որի 1-ին մասի համաձայն՝ բացառությամբ նշված օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

- որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ
- որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող հինգ տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով մարված կամ վերացված է.
- որոնց վերաբերյալ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության, գերիշխող դիրքի չարաշահման կամ անբարեխիղճ մրցակցության համար պատասխանատվություն սահմանող վարչական ակտը հայտը ներկայացվելու օրվան նախորդող երեք տարվա ընթացքում դարձել է անբողոքարկելի, իսկ բողոքարկված լինելու դեպքում թողնվել է անփոփոխ
- որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Սույն կետով

նախատեսված պայմանը չի գործում միջազգային պայմանագրերով նախատեսված միջոցների հաշվին կատարվելիք գնման գործընթացների նկատմամբ.

- որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Ինչ վերաբերում է հայտերի գնահատմանը, ապա հայտնում ենք, որ վերը նշված օրենքի՝

-34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով:

Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

-26-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման իրավասությունը վերապահված է գնահատող հանձնաժողովին:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը մասնակցի կողմից ներկայացրած հայտը գնահատել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ –3, դեմ՝ –0

Տվյալներ ընտրված մասնակիցների վերաբերյալ

Թիվ 1 չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվում Արտավազդ Պողոսյան Գրիգորի Ա/Ձ -ն:

Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը: Անգործության ժամկետ սահմանվում է 10 օրացուցային օր: Ընտրված մասնակիցներին կուղարկվեն պայմանագրերի նախագծերը անգործության ժամկետը լրանալուց հետո.

Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0

Հանձնաժողովի նախագահ՝ Ժորա Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հովհաննես Ղուկասյան

Կարեն Ասատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ժանետա Մերոյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ԳԲԿ-ԳՀԱՇՁԲ-24/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի գնահատման նիստի

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ 18.06.2024թ. ժամը 11:00

Ք. Գյումրի Գ. Նժդեհի 3/3

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	Ժորա Խաչատրյան
Հանձնաժողովի անդամներ՝	Հովհաննես Ղուկասյան
	Կարեն Ասատրյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ժանետա Մերոյան

Ժամը 11: 00 գնահատող հանձնաժողովի նախագահը նիստն համարեց բացված:

1.Էլեկտրոնային հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Ժորա Խաչատրյան)

Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված Պիտանելիության չափորոշիչով սահմանված բոլոր փաստաթղթերը համապատասխանում են հրավերով նախատեսված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ –3, դեմ՝ –0 :

2.Բացված յուրաքանչյուր Էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Ժորա Խաչատրյան)

Բոլոր Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը

Ընդունվել է որոշում՝ կողմ –3, դեմ՝ –0

(Ժորա Խաչատրյան)

3. Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացված պարզաբանումների մասին

(Ժորա Խաչատրյան)

Հարցումներ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0 :

4. Ներկայացված բողոքների և դրանց վերաբերյալ կայացված որոշումների մասին

(Ժորա Խաչատրյան)

- Բողոքներ չեն եղել

Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0 :

5. Հակաօրինական գործողությունների հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագրի մասին

(Ժորա Խաչատրյան)

6.Տվյալներ մասնակիցների կողմից գնային առաջարկների վերաբերյալ.

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գինը /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	Չափաբաժին համար 1	
Ա/Ձ Լիլիթ Մալխասյան	1229760	1229760
Արտավազդ Պողոսյան Գրիգորի Ա/Ձ	970326,67	1164392
Սուրեն Գասպարյան Վարդանի Ա/Ձ	1000000	1000000
Շախուլյան Շին	974400	1169280
Մարտիրոսյան Քոնսթրաքշն ՍՊԸ	999675	1199610
ԷՄ-ԷՅ	-	-

Մասնակիցների և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս մասնակցին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպքեր գնահատող հանձնաժողովի կողմից չեն հայտնաբերվել:
Նվազագույն գին առաջարկած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է գործունեությունը ժամանակավորապես դադարեցված կարգավիճակ:
Գնահատող հանձնաժողովը գրությամբ դիմել է ՀՀ Ֆինանսների նախարարություն՝ պարզաբանելու, թե արդյոք տվյալ հանգամանքը հանդիսանում է հայտը մերժելու հիմք, թե ոչ:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվել է մինչև ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից դիրքորոշման ստացումը:
Ընդունվել է որոշում՝ կողմ –3, դեմ՝ –0

Հանձնաժողովի նախագահ՝ Ժորա Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հովհաննես Ղուկասյան

Կարեն Ասատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ժանետա Մերոյան